

Գր. Կեսարացի այս ուսումնասիրական ուղևորութիւնը կատարելէ յետոյ իր աշակերտը կը թողու Երուսաղէմ, և ինքն Ամիթեցիներուն տուած խոստումը և իր վարդապետին գերեզմանին ալ այցելութիւն մը տալու իր մտադրութիւնը կատարելու համար կը մեկնի դէպի Տիարպէքիր:

Հաւանօրէն Երուսաղէմ այս այցելութեան ատենն է որ Ս. Յակոբեանց վանքին նուիրած է Տաթևացիի Գէր+ Հարցմանց մը և գաւազան մը, ինչպէս կը տեսնուի այդ անթուական մատեանին յիշատակարանին մէջ ուր կը կարդացուին սա տողերը. « յիշատակ է Հարցմանց Գիրքս եւ անկ գաւազան այլ ի հետև, Կեսարացի Գրիգոր վարդապետի ի սուրբ Երուսաղէմ ի դուռն սուրբ Յակոբայ» (ՀՍ. 1925 էջ 570):

Գրիգոր Կեսարացի, հաւանական է որ Հալէպի և Ուրֆայի ճամբով գացած ըլլայ Ամիթ, և այս առթիւ թերևս Հալէպի մէջ Յովհաննէս Դ. Այնթապցի կաթողիկոսին հետ ալ տեսնուած է և անոր՝ իր Երուսաղէմի մէջ տեսածները բացատրած էր և Երուսաղէմի կացութեան դարման տանելու համար թելադրութիւններ ըրած ըլլայ:

Նոյն իսկ կը յանդգնիմ ենթադրել թէ զինքը եպիսկոպոս ձեռնադրող այդ կաթողիկոսին հրահանգով գացած է Ամիթ: